

ԱՐՎԵՍՏԻ ՀԱՍՏԿԵՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Յուրաքանչյուր ինտեգրացված դասընթացի, հատկապես արվեստի դասընթացի կառուցումը միշտ կապված է մի շարք դժվարությունների հետ: Այդպիսի դասընթաց ստեղծելիս առաջին հերթին պետք է ցուցաբերել ունիվերսալ մոտեցում, գտնել «բանալի», որը կօգնի երեխային բացել դուռը դեպի արվեստի մեծ աշխարհ: Այդպիսի «բանալի», կարող է դառնալ արվեստի համալիր դասավանդման ծրագիրը, որը առաջին հերթին պետք է ուղղված լինի այն բանին, որ կարողանա դառնալ արվեստի բոլոր տեսակների ընդհանրացման միջոց, այսինքն՝ ձևավորի նրանց մեջ եղած միասնությունը:

Արվեստի ուսումնասիրության առաջին փուլի խնդիրը պետք է դառնա իրականության, բնության, հասարակության մարդու նկատմամբ վերաբերմունքի, այսինքն՝ աշխարհայացքի ձևավորումը: Այն բանի գիտակցումը, թե ինչի համար է արվեստը, ինչ նպատակների է ծառայում նա, ինչ է պատմում աշխարհի մասին, ինչպես է օգնում գլուխ հանելու կյանքի բարդ իրավիճակներից, դառնում է նախադրյալ նրա հետագա ուսումնասիրությունների համար, երբ օրինաչափորեն առաջ են գալիս հարցեր. ինչպե՞ս է դա արվել, ինչո՞ւ է դա հնչում այդպես և ոչ թե այլ կերպ, ինչո՞ւ...: Գլխավորն է չչտասպել արագացնելու բնականոն հասունացման գործընթացը, այլ ստեղծել այնպիսի պայմաններ, երբ ոչ մի էլեմենտ, ոչ մի ձև, որ մատուցվում է դասերին, չթվա անիմաստ, այլ գտնի իր սեփական տեղը այն համակարգում, որը կնախապատրաստվի ուսուցչի կողմից:

Ելնելով այն բանից, որ ժամանակակից դպրոցի գլոբալ նպատակը հանդիսանում է մարդկության՝ իր երկարատև կյանքի ընթացքում կուտակած սոցիալական փորձի հիմնադրույթների փոխանցումը աճող սերնդին, գիտնականները առանձնացնում են այդ փորձի փոխանցման չորս էտապ: Դրանք են՝

1. գիտելիքներ բնության, մարդու տեխնիկայի մասին,
2. գործունեության հնարների փորձեր (ունակություն, հմտություն),
3. ստեղծագործական գործունեության փորձեր,
4. աշխարհի և սեփական գործունեության արժեքավորման փորձեր:¹

Առաջին փուլում (1-4 դասարան) երեխաների մոտ առաջանում է արվեստի ընկալման պահանջ՝ որպես աշխարհի հետ հաղորդակցվելու պատկերաբովանդակային ձև, բարոյական, գեղագիտական և զգացմունքա-արժեքային չափանիշների միասնության պայմաններում:

Երկրորդ փուլում (5-8 դասարան) նպատակահարմար է անդրադառնալ «գովանդակալից գեղարվեստական ձևերին», գեղարվեստական արտահայտչամիջոցների, արվեստի լեզվական համակարգի, նրանց փոխազդեցության գիտակցմանը, առանց որոնց անհնար է գրագետ ընթերցողի, ունկնդրի և հանդիսատեսի դաստիարակումը:

Վերջապես, բարձր դպրոցական տարիքում ստեղծագործական սկիզբը հասնում է իր պատկերաստեղծատիպ մտածողության, օրինաչափությունների որոնման ու հաստատման ունակության ծաղկմանը, որը հատուկ է ոչ միայն արվեստին, այլ նաև իրականության բոլոր դրսևորումներին:

Տրամաբանական է, որ այս փուլերը գոյություն չունեն իրարից անկախ, այլ գտնվում են անընդհատ փոխազդեցության մեջ:

Ուսուցիչը պարտավոր է ամեն կերպ հովանավորել իր աշակերտների ինտելեկտուալ, ստեղծագործական նախաձեռնությունները, զարգացնել նրանց երևակայությունը, խրախուսել նրա ստեղծագործական համակարգի ստեղծման ձգտումները, ինչպիսի ձևերով էլ որ դրանք դրսևորվեն՝ գեղարվեստական կամ ինտելեկտուալ գործունեության, թե մարդու կամ բնության նկատմամբ վերաբերմունքի:

Նախնական փուլում հաշվի առնելով երեխայի տարիքն ու կենսափորձը, բնական է՝ արվեստի շատ հարցեր դեռ չեն կարող դառնալ ուսուցման առարկա: 1- 4 դասարաններում հիմնական թեմա պետք է հանդիսանան այնպիսիները, որոնք երեխա-

¹ Բ. Ն ե մ ե ն ս կ ի, Գեղագիտական դաստիարակության պրոբլեմների մասին, Եր., 2002, էջ 105:

յին չեն կտրում իրեն ծանոթ սովորական միջավայրից, այլ մտնում են նրա մեջ և զարգացնում երևակայությունը:

«Արվեստի ինտեգրացված դասերը» ծրագրով առաջարկվում է ուսուցման առաջին էտապում սահմանափակվել երկու թեմատիկ բլոկներով՝ «Տարվա եղանակները արվեստում» և «Հեքիաթը արվեստում», որովհետև այս փուլը երեխայի առաջին քայլն է աշխարհի ճանաչման ճանապարհին: «Տարվա եղանակները արվեստում» թեման արդեն իր անվանումով վկայում է, որ այն կապված է բնության եղանակային ցիկլի հետ: Ուսուցիչը մեծ օժանդակություն է ստանում հենց բնությունից, որը նրան տալիս է անասնամանավակ նյութական հնարավորություններ: Լավ եղանակներին պարասպանները կարելի է անցկացնել անգամ այգում, անտառում, գետափին, կուտակել անմիջական տպավորություններ, որոնք այդ տարիքում նույնքան անհրաժեշտ են, որքան գեղարվեստականը: Միաժամանակ ուսուցիչն անընդհատ կենտրոնացնում է երեխայի ուշադրությունը դասի նպատակների վրա, զարգացնում նրա դիտողականությունը: Մեփական տպավորությունների և բնության նկատմամբ զարգացրած դիտողականությունը չունի առարկայական սահման, այն վերջում դառնում է կարևոր գործոն արվեստի ստեղծագործության, բնության երևույթների ընկալման ու գնահատման գործում, մի խոսքով, այն ամենի, ինչից ձևավորվում է հասուն մարդու ներաշխարհը:

Պարզաբանելով բարդ ու բազմառեսակ գեղարվեստական նյութը՝ կապված արվեստում տարվա եղանակների արտացոլման հետ, ուսուցիչը իր հնարավորության սահմաններում պետք է ստեղծի այնպիսի մթնոլորտ, որը կնպաստի նյութի յուրացմանը: Հենց այդ պատճառով էլ դասընթացի մեջ ծրագիրը և դիդակտիկ նյութերը պետք է համապատասխանեն օրացույցի ամսաթվային համակարգին:

Հաջորդ թեմատիկ բլոկը՝ «Հեքիաթը արվեստում», կապված է երեխաների կողմից շատ սիրված գործող անձանց հետ: Շարունակելով սկսած թեման բնության եղանակների մասին՝ ուսուցիչը փորձում է նրանց տալ գեղագիտական նշանակություն: Բնությունը ոչ միայն միջավայր է, որտեղ ծավալվում են հեքիաթի դեպքերը, այլ կենդանի մասնակից, որը կարող է օգնել կամ խանգարել հեքիաթի հերոսներին: Վերլուծելով այս կամ այն հեքիաթի սյուժեն՝ ուսուցիչը մանրամասնորեն բնութագրում է հերոսների արարքների մոտիվները, դրանց հետևանքները: Ուշադրություն է դարձվում այն բանի վրա, թե ինչպես են հարաբերվում բնության երևույթները հերոսների արարքների հետ: Անդրադառնալով հեքիաթային թեմային, բնութագրելով նրա հերոսներին, կենդանիներին ու մարդկանց, ուսուցիչը բարձրացնում է բարոյ ու չարի հիմնախնդիրը, ցույց է տալիս բնության լուսավոր ուժերի հաղթանակը խավարի ուժերի նկատմամբ:

Ընդգծելով այս երկու բլոկների ուսումնադաստիարակչական նշանակությունը՝ առաջարկում ենք ևս մեկ թեմատիկ բլոկ՝ «Ազգային տոները», որոնք կարելի է դարձնել արվեստի համակցված դասի լավագույն օրինակ:

Տոնակատարությունների ժանրը դպրոցում սերտ կապ ունի ուսումնական գործընթացի հետ: Նա շարունակում է «Տարվա եղանակները» և «Հեքիաթը արվեստում» շարքերի գիծը և որոշ չափով համընկնում ուսուցման նպատակների հետ: Այդպիսի նպատակներից են՝

- տոների հավաքիչ բնույթը, երաժշտության ու կերպարվեստի ծրագրերը.
- երեխաների հաղորդակցման հնարավորությունը միմյանց և ուսուցիչների հետ.
- բազմազան դերերի լայն ընտրությունը և տոնական սյուժեների արդիականացումը (դերերի ու խաղերի միջոցով):

Տոների ժամանակ (Բարեկենդան, Չատիկ, Համբարձում, Վարդավառ) հնարավոր է զուգորդել ոչ միայն երգեր ու պարեր, այլ նաև որոշ թատերական ներկայացումներ: Ներկայացման պատրաստության ընթացքում երեխաները հնարավորություն կունենան ցուցադրելու իրենց ողջ ստեղծագործական երևակայությունը: Կարելի է դերերի, զգեստների ընտրությունը թողնել նրանց նախասիրությանը, այս դեպքում լրիվ կրացահայտվեն նաև նրանց նկարչական ունակությունները (դիմակներ, դեկորներ պատրաստելիս): Հայոց տոների շարքում Չատիկը բնության զարթոնքը խորհրդանշող ամենատարածված տոնն է, հետևաբար այն կարելի է կազմակերպել բոլոր դպրոցներում և բոլոր դասարանների համար: Տոնի առաջին և ամենամեծ խորհուրդը բնության զարթոնքի, տարվա եղանակների գատվելու, բաժանվելու գաղափարն է: Չատվել բա-

որ այստեղ նշանակում է ոչ միայն տարվա եղանակների զատում, այլ նաև բնության գույների. ամեն ինչ ծաղկում գունավորվում է: Ուշագրավ է Ջատիկի տոնին պատրաստվելու ողջ արարողությունը, հատկապես երբ երեխաները սկսում են նկարագրող ձվերն ու ներկել դիմակները. այս ասպարեզում երեխաների երևակայությունը սահման չի ճանաչում: Ներկված ու նկարագրված ձվերն իրենց զարդանախշերի անկրկնելիությամբ ու հարստությամբ զարմացնում են դիտողին: Այսպես, ստուգվում են երեխաների նախասիրությունները, գիտելիքները, ունակությունները, և անհրաժեշտության դեպքում օգնություն է ցուցաբերվում նրանց՝ ամրապնդելով ուսուցչի հետ արդեն ստեղծված կապը, նպաստում նրանց փոխներձեցմանը: Տոնակատարությունների ժամանակ չի բացառվում նաև իմպրովիզացիայի դերը, որի ժամանակ երեխան կոնկրետ կերպարից անցնում է ավելի ազատ վերացական կերպարի, և որքան խորանում, այնքան մեծանում են երեխայի ստեղծագործական հնարավորությունները:

Արվեստի համակցված դասընթացի ամբողջականության անհրաժեշտությունը իհարկե չի բացառում նաև դասընթացի շեշտադրումը հոգուտ արվեստի այս կամ այն տեսակի՝ կախված ուսուցչի մասնագիտությունից և ունակությունից:

СОСТАВЛЕНИЕ ИНТЕГРИРОВАННОГО УЧЕБНОГО КУРСА ИСКУССТВА

___ *Резюме* ___

___ *Л. Атанесян* ___

Для эффективного построения курса “Интегрированное искусство” предлагается наряду с тематическими блоками “Времена года” и “Сказки в искусстве” включить блок “Национальные праздники”. Многослойный характер национальных праздников обладает неограниченными возможностями для формирования творческого воображения учащихся.